



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՂԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Հոկտեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիաների կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան


ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի առաջին փասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում մի փոքր բացասական, Սյունիքում՝ դրական շեղումով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝ +23...+25°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +19...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +25...+27°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +29...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+23°C, Շիրակում՝ +17...+22°C Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +16...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +21...+23°C, Գեղարքունիքում՝ +14...+19°C, Լոռիում՝ +21...+26°C, Արմավիրում՝ +24...+26°C, Արարատում՝ +26...+28°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +15...+17°C, նախալեռներում՝ +19...+21°C (Աշտարակ՝ +26°C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝ +3...+8°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...+2°C, նախալեռնային շրջաններում՝ +5...+7°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +9...+12°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+5°C, Շիրակում՝ +1...+4°C (Աշոցք՝ -4°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -1...+3°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+6°C, Գեղարքունիքում՝ +1...+4°C (Գավառ՝ -2°C), Լոռիում՝ 0...+4°C (Տաշիր՝ -2°C), Արմավիրում՝ +4...+8°C, Արարատում՝ +6...+9°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -1...+1°C նախալեռներում՝ +5...+6°C:




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 11-33մմ (79-237%), Լոռիում՝ 8-18մմ (55-90%), Տավուշում՝ 7-15մմ (46-105%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 16-17մմ (102-150%), նախալեռներում՝ 17-24մմ (233-486%), Գեղարքունիքում՝ 15-52մմ (86-377%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 21-39մմ (140-238%), նախալեռներում՝ 17մմ (165%), Արմավիրում՝ 15-23մմ (224-271%), Արարատում՝ 8-18մմ (174-306%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 52մմ (8%), նախալեռներում՝ 17մմ (173%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 10-21մմ (139-185), նախալեռներում՝ 28-42մմ (210-333%):



Հոկտեմբերի առաջին տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են 0...-3°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում՝ +1...+5°C, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +6...+9°C աստիճան:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսեր



Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ սկսվել են աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները, կատարվել են բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, ընկույզի, լեռնային շրջաններում՝ հնդավորների, կարտոֆիլի, ճակնդեղի բերքահավաք: Առանձին լեռնային շրջաններում աշնանացանը ծլել է:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները: